Ուրիշ ի՞նչ ծառայություններ են տրամադրվում

- ծնողին գտնելու ծառայություն.
- հայրության հաստատում.
- երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշման հաստատում, վերանայում և կիրարկում.
- առողջության ապահովագրություն տրամադրելու վերաբերյալ դատարանի որոշման հաստատում, վերանայում և կիրարկում:

Կարևոր կետեր

- Տարբեր նահանգներում օրենքները տարբեր են:
- Բոլոր օտար պետությունները չեն, որ Միացյալ Նահանգների հետ պայմանավորվածություն ունեն երեխայի ապրուստադրամի վերաբերյալ այստեղ ընդունված օրենքներն իրենց մոտ հաստատելու և կիրարկելու վերաբերյալ:
- Երեխաների օգնության տեղական գործակալությունը կարող է ստիպված լինել այլ կերպ գործել մեկ այլ նահանգում կամ գործող բանակում գտնվող անձանց դեպքում: Սակայն այդ դեպքում էլ երեխայի ապրուստադրամը կարելի է գանձել Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտի միջոցով:

Կալիֆոռնիայի երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտը իրավաբանական ծառայություններ չի տրամադրում ծնողներին կամ խնամակալներին:

Առնոլդ Շվարցենեգեր, Կալիֆոռնիա նահանգի նահանգապետ

Քիմբըրլի Բելշե, Կալիֆոռնիայի առողջապահության և սոցիալական ծառայությունների գործակալության քարտուղար

Գրետա Ուալաս, Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտի տնօրեն

1-866-249-0773 (անվճար)
www.childsup.ca.gov

PUB 251 (1/06)
ARMENIAN

Օգնություն Կալիֆոռնիայի երեխաներին

Երեխայի ապրուստադրամը. երբ ծնողներն ապրում են տարբեր նահանգներում

Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտ

Երբ երեխայի ծնողները կամ խնամակալներն ապրում են տարբեր նահանգներում կամ երկրներում, երեխայի ապրուստադրամի կապակցությամբ գործ կարելի է բաց անել երեխաների օգնության այն տեղական գործակալությունում, որտեղ բնակվում է ծնողներից կամ խնամակալներից մեկը: Երեխաների օգնության տեղական գործակալությունը կա՛մ կհաստատի և կկիրարկի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշումը, կա՛մ օգնություն կխնդրի մյուս նահանգից կամ պետությունից:

Ի՞նչ է Ընտանեկան խնամքի միասնական միջնահանգային օրենքը

Ընտանեկան խնամքի միասնական միջնահանգային օրենքը մի օրենք է, որում ասվում է, թե ինչպես կարելի է կատարել և կիրարկել երեխայի խնամքի պարտականությունները երբ կողմերը միևնույն նահանգում կամ երկրում չեն բնակվում: Դաշնային օրենքը նահանգներից պահանջում է համագործակցել միմյանց հետ երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշումները հաստատելու և կիրարկելու հարցում:

Ի՞նչ անել, եթե ես երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշում չունեմ

Երեխաների օգնության տեղական գործակալությունը, անհրաժեշտության դեպքում, կաշխատի մյուս նահանգի հետ՝ այդ որոշումը ձեռք բերելու համար կամ կխնդրի մյուս նահանգին կիրարկել այն:

Ի՞նչ անել, եթե ես արդեն ունեմ երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշում

Որոշումը բերեք երեխաների օգնության Ձեր տեղական գործակալություն, և, անհրաժեշտության դեպքում, գործակալությունը կաշխատի մյուս նահանգի հետ՝ այդ որոշումը կիրարկելու համար:

Ո՞ր նահանգն է որոշում երեխայի ապրուստադրամի չափը

Եթե Դուք դատարանի որոշում չունեք, ապա օրենքը պահանջում է, որ՝ ելնելով Ձեր գործի բնույթից, երեխաների օգնության Ձեր տեղական գործակալությունը որոշի, թե որ նահանգը պետք է սահմանի երեխայի ապրուստադրամի չափը:

Ապրուստադրամի վերաբերյալ որոշումը կարո՞ղ է փոխվել

Այո: Ձեր գործը կարող է վերանայվել կողմերից որևէ մեկի կամ երեխաների օգնության տեղական գործակալության հայցով: Կալիֆոռնիայում երեխայի ապրուստադրամը կարող է ավելացվել կամ պակասեցվել՝ կախված մի շարք գործոններից, սակայն հիմնականում հաշվի են առնվում երկու ծնողների եկամուտը և երեխա(ներ)ի հետ նրանցից յուրաքանչյուրի անցկացրած ժամանակը:

Ես ստիպված կլինե՞մ այցելել մյուս նահանգը

Ոչ, երեխաների օգնության տեղական գործակալությունը կզբաղվի այդ հարցով Ձեր փոխարեն, բայց հնարավոր է, որ Ձեզանից պահանջվի հեռախոսով մասնակցել դատական ունկնդրությանը:

Երեխաների ապրուստադրամի վերաբերյալ օրենքները բոլոր նահանգներում նու՞յնն են

Ապրուստադրամի վերաբերյալ օրենքները կարող են տարբեր նահանգներում տարբեր լինել: Ընտանեկան խնամքի միասնական միջնահանգային օրենքն օգնում է նահանգներին համագործակցել այս հարցում:

Ես դատարանի որոշում ունեմ մի նահանգից, սակայն ո՛չ ես, ո՛չ էլ մյուս ծնողը չենք ապրում այդ նահանգում: Այդ որոշումն ուժի մե՞ջ է:

Այո, երեխաների օգնության տեղական գործակալությունը կկիրարկի դատարանի ամենավերջին որոշումը՝ անկախ նրանից, թե կողմերը որտեղ են ապրում:

Կարո՞ղ եմ ես համոզված լինել, որ մյուս ծնողը կամ խնամակալը չեն իմանա իմ հասցեն կամ այլ կարգի անձնական բնույթի տեղեկություն:

Այո: Եթե Ձեզ անհանգստացնում է Ձեր վերաբերյալ անձնական բնույթի տեղեկությունների բացահայտման հնարավորությունը, խոսեք այդ մասին երեխաների օգնության Ձեր տեղական գործակալության հետ, որպեսզի վերանայվի Ձեր գործի վարման կարգը: